

Դավիթ Ս. Գյուրջիյան  
Բանասիր. գիյր. թեկնածու

## ԱՐՏԱԳԱՂԹԻ ԵՎ ՍՓՈՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայերենի «արաբական երկրների հայ» բառախմաստային խումբը\*

**Բանալի բառեր** – արտագաղթ, Սփյուռք բառախմաստային խումբ, արաբական աշխարհ, եգիպտահայ, արաբահայ, սիրիահայ, լիբանանահայ, իրաքահայ, բեյրութահայ, արևմտահայ, սփյուռքահայ:

### Մուտք

Հայկական Սփյուռքը տարբերակվում է զանազան հատկանիշների հիման վրա. մերձավոր և հեռավոր Սփյուռք, ավանդական և նոր, խորհրդային ժամանակներում՝ ներքին և արտաքին Սփյուռք, Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և այլն:

Այդպիսի մի տարաբաժանում է արաբական աշխարհի երկրների հայտնությունը: Արաբական երկրներն ընդգրկում են Հյուսիսային Աֆրիկայից մինչև Մերձավոր Արևելք ու Արաբական թերակղզի ներառող հսկայածավալ տարածքները՝ Ատլանտյան օվկիանոսից մինչև Հնդկական օվկիանոս, Միջերկրական ծովից մինչև Աֆրիկյան եղջյուր:

Արաբական աշխարհը ընդգրկող Արաբական պետությունների լիգան այսօր ներառում է 22 երկիր, որոնցից տասում հայերը որոշակի ներկայություն են ունեցել անցյալում, ինչպես և այսօր ունեն: Որոշ երկրներում հայերը հաստատվել են վաղ ժամանակներում, երբեմն՝ արաբներից շատ ավելի վաղ:

Արաբները պատմական ասպարեզ մտան 635-ին՝ Արաբական թերակղզուց շարժվելով դեպի Դամասկոս ու Անտիոք: Բյուզանդական կայսրությունը ջանքեր գործադրեց նրանց առաջխաղացումը կանխելու համար, բայց գրեթե անդարձ կորցրեց Պաղեստինը, Սիրիան, Ասորիքը, Միջագետքը, Եգիպտոսը՝ կայսրության ծաղկուն շրջանները: Արաբները, ի տարբերություն բյուզանդացիների, հայերին ապագգայնացնելու և ձուլելու քաղաքա-

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 2 (66), ամբիլ-հունիս, 2019

ՎԿՎ համահայկական հանդես

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.04.2019:

կանություն չէին վարում, այդպիսով չէին սպառնում հայոց ազգային գոյությանը<sup>1</sup>:

Տարբեր դարերում եղել են հայ գաղթականներ, որոնք կամավոր կամ բռնության հետևանքով ներկայիս արաբական աշխարհի որևէ երկրում հաստատվելով՝ գաղութներ են ձևավորել, համայնքային կյանք սկսել, միաբանվել ազգային խնդիրների շուրջ, կառուցել եկեղեցիներ, դպրոցներ բացել, պարբերականներ ու գրքեր տպագրել, ազգային մշակույթ ստեղծել, միություններ հիմնել, հսկայական ջանքեր գործադրել հայապահպանության համար: Հայրենագրկված հայ գաղթականների համար արաբական երկրներն անցյալ դարասկզբին երկրորդ տուն դարձան:

Արաբական աշխարհի երկրներում ապրող հայերը կրթ տարբերակվեցին կոնկրետ երկրանունով: Դիտարկենք Եգիպտոսի հայերի օրինակը: Հռոմեական պատմիչ Սայուստիուսը (մ. թ. ա. I դ.) հայտնում է, որ Եգիպտոսում շատ հայեր են ապրում և իշխող դիրք ունեն<sup>2</sup>: Հայաստանը՝ որպես Հռոմից կախման մեջ գտնվող երկիր, II-III դդ. Հյուսիսային Աֆրիկայի հռոմեական պրովինցիաներ է ուղարկել զորամիավորումներ, որոնք 7-10 տարի ծառայել են այնտեղ: Կայսրության քայքայումից հետո էլ Եգիպտոսի հայկական գինվորական բնակավայրերը շարունակել են համարվել Հայոց աշխարհից եկած երիտասարդներով: Այսպիսով՝ Եգիպտոսի հայերը սկզբնապես հիմնականում գինվորականներ են եղել<sup>3</sup>: Իսկ V-VI դդ. հելլենիստական մշակույթի կենտրոն Ալեքսանդրիան գրավում էր ուսումնաստենչ հայ երիտասարդներին, սակայն թե՛ հայ գինվորականները և թե՛ ուսանելու մեկնածուները Եգիպտոսի մնայուն բնակիչներ չէին, արդի ըմբռնումով՝ չէին կարող որպես եգիպտահայեր ընկալվել:

Հայերի զանազանությունն<sup>4</sup> արտահայտող հայերեն բառեր (**արևմտահայ**, **արևելահայ**, **պարսկահայ**, **տաճկահայ**, **ռուսահայ** և այլն) սկսեցին կազմվել XIX դ. երկրորդ կեսից: Ձևավորվեցին բառակազմական մասնակաղապարներ՝ մասնավորապես «երկրանուն+հայ», «քաղաքանուն+հայ»: Այդ շրջանից սկսած ստեղծվել են մի շարք բառեր, որոնք միավորվում են «արաբական երկրներում ապրող հայ» բառաիմաստային խմբի մեջ: Հենց այդ բառերն են դարձել մեր հետազոտության առարկան: Քննությունը կկատարենք ըստ «երկրանուն+հայ» մասնակաղապարով ստեղծված բառերի՝ հիմք ընդունելով բառի կազմության ժամանակը:

## Եգիպտահայ

Ժամանակագրական առումով առաջինը **եգիպտահայ** բառն է ստեղծվել: Եգիպտոսում ծառայող հայերից բացի երկրում եղել են նաև հայ առևտրականներ, անապատականներ և այլք: Հայեր եղել են անզամ Եգիպտոսի

1 Տե՛ս **Ալթոյաձեան Ա.**, Պատմություն հայ գաղթականության. Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը, հատ. Ա, Քրիստոսէ առաջ Զ դարէն մինչև ժԱ դար Քրիստոսի, Գահիրէ, 1941, էջք 208, 344:

2 Մեջբերումը ըստ՝ **Ալթոյաձեան Ա.**, Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը: (Սկիզբէն մինչեւ մեր օրերը), Գահիրէ, 1960, էջ 4:

3 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր., 1964, էջ 128:

4 Հմտ. «Հայ ժողովուրդի պարագային, «ինքնություն» հասկացողությունը կը խտացնէ երկու հարցեր՝ ազգային ինքնություն և սփիւքային դրություն» և «Ինքնությունը (identity) կ'ընդգծէ զանազանությունը և տարբերությունը (diversity)» (տե՛ս **Հայր Լևոն Զեքիան**, Ինքնության խճանկար, աշխատասիրեց Սալի Գասպարեան, Պէյրոս, 2001, էջ 109):

կառավարիչների մեջ՝ Ներսես Բասենցի, Արտավան Արշակունի և ուրիշներ<sup>5</sup>:

VII դ. առաջին կեսին (640 թ.) երկիրը նվաճած արաբները խոչընդոտներ չեն հարուցել հայերի դեմ: Սակայն արաբական տիրապետության շրջանում հայերի թիվը նվազել է: 969-ին Եգիպտոսը թոթափել է խալիֆայության լուծը և անկախություն ձեռք բերել: Հայ գաղութը նպաստավոր պայմաններում էր. հայերից ոմանք հասել են վեգիրության աստիճանի և մեծապես նպաստել երկրի առաջընթացին: Այդ պատճառով Եգիպտոսի պատմության այդ շրջանը կոչել են «Հայկական շրջան»:

Եգիպտոսի հայ բնակչությունը XI-XII դդ. ամենից շատն է եղել մյուս ժամանակաշրջանների համեմատ (եթե, իհարկե, չհաշվենք հետեղեռնյան շրջանը, երբ գաղթականների մեծ հոսք է եղել): Հայերի զգալի մասը կենտրոնացած էր ներկայիս Կահիրե քաղաքում, բայց եղել են Եգիպտոսի գրեթե բոլոր քաղաքներում: Նրանք պետական աշխատողներ էին, ճարտարապետներ, արհեստավորներ, վաճառականներ: Հայերը բազմաթիվ եկեղեցիներ են կառուցել, նրանց չի պարտադրվել հավատափոխ լինել:

Քրիստոնյաների հալածանքների պատճառով (XII դ. վերջին քառորդից մինչև XIII դ. կեսերը) շատ հայեր տեղափոխվել են Կիլիկյան Հայաստան և Եգիպտոսի հարևան երկիր՝ Հաբեշտան (Եթովպիա): Վիճակը վատթարանում է մամլուկների տիրապետության շրջանում (1250-1517 թթ.), երբ հազարավոր հայ գերիներ էին բերվում Կիլիկյան Հայաստանից, ինչպես նաև Սիրիայից և հայկական այլ գաղթավայրերից: XIV-XV դդ. Եգիպտոսի հայերի մասին աննշան տեղեկություններ կան<sup>6</sup>: 1517-ից սկսած, երբ թուրքերը տիրում են Եգիպտոսին, հայ գաղութը խիստ թուլանում է. XVI- XVII դդ. հայերն անգամ աղոթատներ չունեին: 1615 թ. Կահիրեի հայկական թաղամասում ապրում էին 200 տուն հայեր:

Գաղութը վերելք է ապրել XIX դ. առաջին կեսին (1805-1849 թթ., Մուհամմեդ-Ալիի օրոք): Այդ շրջանի Եգիպտոսի կյանքում մեծ դեր են ունեցել Պողոս Յուսուֆյանը և Նուբար փաշան: Հայերը նշանակվել են պետական բարձր պաշտոնների, նկատելի դեր կատարել ֆինանսների ոլորտում, գործելու մեծ հնարավորություն են ստացել առևտրականները, որոնք հետագայում մտել են նաև արդյունաբերության ասպարեզ (հայերը նույնիսկ որոշ ոլորտների մենաշնորհ են ունեցել): Գաղութը մեծանում է. գաղթականներ են գալիս Արևմտյան Հայաստանից, Թուրքիայի այլ շրջաններից և հարևան արաբական երկրներից<sup>7</sup>:

XIX դարասկզբին Կահիրեում կար ընդամենը 50-60 տուն հայ (հիմնականում պոլսեցի)<sup>8</sup>: 1886 թ. երկրում ապրում էր մոտ վեց հազար հայ, համիդյան ջարդերից հետո՝ 1898-ին, հայերի թիվը հասել է 9200-ի (զգալի մասը հետագայում վերադարձել է բնօրրան), 1907-ին հայերը մոտ ութ հազար էին, Ադանայի ջարդերից հետո Եգիպտոս է գաղթել շուրջ երկու հազար հայ, իսկ 1915 թ., ըստ որոշ հետազոտողների, հայ գաղթականների թիվը 25-50 հազար էր<sup>9</sup>: XIX դ. սկզբին ազգային դպրոցներ են բացվել

5 Տե՛ս Արքահայր Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, էջ 128-129:

6 Տե՛ս Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002, էջ 453:

7 Տե՛ս Թովուրյան Հ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Եր., 1978, էջ 13:

8 Տե՛ս Ազոնց Ս., Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, մասն երրորդ, Ափրիկե, Վենետիկ, 1802, էջ 54:

9 Տե՛ս Արքահայր Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Խառ. Բ, Եր., 1967, էջ 70:

Կահիրեում, Ալեքսանդրիայում: Հայկական առաջին եկեղեցին կառուցվել է X դ., XI–XII դդ. եղել են երեսունից ավելի գործող եկեղեցիներ ու վանքեր: Երկրում այժմ գործում են կրթական, մշակութային և այլ միություններ, առաքելական և կաթոլիկ յոթ եկեղեցիներ, մեկ մատուռ<sup>10</sup>: Հայերը մեծ ջանք են թափել Եգիպտոսի առաջընթացի համար:

Այսպիսով՝ հայերը Եգիպտոսում են երկու հազար տարուց ավելի:

Նոր ժամանակներում հայոց լեզվամտածողության մեջ առաջ եկավ «Եգիպտոսի հայ» հասկացությունը, որից հետո կազմվեց **եգիպտահայ** բառը: Այդպես իրականացվում է լեզվի կարևոր գործառնություններից մեկը. «որպես երևակայական, մտածական և առարկայական աշխարհների տարրորոշված վերարտադրում, լեզվական ոլորտն ունի այդ երեք աշխարհները որոշակիորեն պատկերելու, նկարագրելու գործառնություն»<sup>11</sup>:

Իսկ էրբ է կազմվել հայկական ամենահին գաղթավայրերից մեկի ներկայացուցչին անվանող **եգիպտահայ** բառը: Մեր գտած ամենավաղ գործածությունները 1867 թվից են. «... որով ո՛չ միայն **եգիպտահայոց** անկեղծ շնորհակալութեանը վերայ իրաւունք պիտի ստանաք», «**եգիպտահայք** վեց ամսէ ի վեր գՄկրտիչ եպիսկոպոսը իբրև Փոխ-առաջնորդ չեն ճանաչեր»<sup>12</sup>: Բառի ստեղծման ժամանակի ձշտումը հետաքրքիր է հայերենի պատմական բառակազմագիտության համար:

Ուշագրավ է, որ նույն գրության մեջ (վերնագիրը՝ «Եգիպտոսի Հայք») գործածված են նաև **եգիպտոսի հայ բնակիչներ**, **եգիպտոսի հայ ժողովուրդ** բառակապակցությունները, որոնցից և մասնավորապես **եգիպտոսի հայ**-ից է առաջացել **եգիպտահայ**-ը:

**Եգիպտահայ**-ը սկզբնապես գործածվել է գոյականի արժեքով, ընդ որում միայն հոգնակի թվով (ուղիղ և թեք հոլովներով): Հմնտ. «Բարեյիշատակ Եուսուֆեան Պօղոս պէյի օրովն **եգիպտահայք** անդորր ու անվրդով վիճակ մը կ'վայելէին», «Կ'երևի թէ Պօղոս պէյի հետ **եգիպտահայոց** բաղդը, խաղաղութիւնն ու բարօրութիւնը կորան»<sup>13</sup>: Հետագայում բառը ձեռք է բերել նաև ածականի նշանակություն (**եգիպտահայ թեմ**, **գաղութ**, **համայնք**, **կյանք**, **մամուլ**, **առևտրական**, **գործիչ**...): Արժեքային այսպիսի բաշխումն օրինաչափ է, քանի որ երկբաղադրիչ բարդությունների մեջ սովորաբար հիմքային արժեք ունի երկրորդ բաղադրիչը<sup>14</sup>: **Եգիպտահայ**-ի և քննարկվող բառախմբի մյուս բառերի արժեքները պայմանավորված են բառակազմական հիմքի արժեքներով: **Հայ** բառույթը V դ. նախ գոյականի արժեք է ունեցել, ապա ձեռք բերել ածականի արժեք՝ «հայկական» իմաստով<sup>15</sup>:

Արևելահայ իրականության մեջ **եգիպտահայ**-ն առաջին անգամ գրանցվել է Հ. Դադբաշյանի հայ-ռուսերեն բառարանում<sup>16</sup>, այսինքն՝ «բառարա-

10 Արաբական երկրների հայ համայնքների մասին շատ տվյալներ քաղել ենք հանրագիտարաններից՝ «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 1-12, Եր., 1974-1987, «Հայ սփյուռք», Եր., 2003:

11 **Աթայան Է. Ռ.**, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 280:

12 «Արշալոյս Արարատեան», օրագիր Զմիւռնիայ, 27.05.1867:

13 «Արևելեան մամուլ», հանդէս ամսեայ, Զմյուռնիա, 1872, սեպտեմբեր, էջ 407:

14 Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 220:

15 Տե՛ս **Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Ազգերեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 29:

16 Հմնտ. **Դադբաշեան Յ.**, Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն, Թիֆլիս, 1911, էջ 234:

նային կենսագրությունն» սկսվում է թարգմանական բառարանից<sup>17</sup>: Նշված բառարանում բառերը դասավորված են փնջային սկզբունքով, **Եգիպտահայ**-ը հայտնվել է նույնարմատ բառերի (**Եգիպտագետ**, **Եգիպտագիտություն**, **Եգիպտացի**, **Եգիպտացորե(ա)ն**, **Եգիպտուհի** և այլն) շարքում: Գոյական է դիտվել, թարգմանվել египетский армянинъ («Եգիպտոսի, եգիպտացի, եգիպտական հայ»):

Հայ-ռուսերեն ակադեմիական բառարանում բառը երկարժեք է՝ գոյական (армянин, живущий в Египте «Եգիպտոսում ապրող հայ») և ածական (относящийся к армянам, живущим в Египте «Եգիպտոսում ապրող հայերին վերաբերող»)<sup>18</sup>:

Հայ-ադրբեջաներեն բառարանում **եգիպտահայ**-ը տրվել է мисирли ермәни («Եգիպտոսի, եգիպտացի, եգիպտական հայ») թարգմանությամբ<sup>19</sup>:

Արևմտահայ բառարանագրության մեջ **եգիպտահայ**-ն առաջին անգամ հանդիպում է Հ. Դադբաշյանի բառարանից տասնամյակներ անց, կրկին թարգմանական՝ Մ. Գույումձյանի հայերեն-անգլերեն ընդարձակ բառարանում, որտեղ թարգմանվել է Armenian living in Egypt<sup>20</sup> «Եգիպտոսում ապրող հայ», նշվել է միայն գոյականի արժեքը<sup>21</sup>: Հայերեն-իսպաներեն բառարանում նույնպես գոյական է, Մ. Գույումձյանի բառարանի պես ընդգծվում է Եգիպտոսում ապրելու հանգամանքը՝ armenio que vive en Egipto<sup>22</sup>:

Միալեզվյան բառարաններում **եգիպտահայ**-ը գրանցվել է ավելի ուշ<sup>23</sup>: Առաջին անգամ արձանագրվել է Ստ. Մալխասյանցի բառարանում, միայն գոյականի արժեքով՝ «Եգիպտոսում բնակող հայ»<sup>24</sup>: Այս մոտեցումը որդեգրվել է արևմտահայերենի երկհատոր բացատրական բառարանում՝ «Եգիպտոսի մեջ բնակող Հայ»<sup>25</sup>: Ակադեմիական բացատրական բառարանն ավելացրել է գոյականի իմաստը ցուցադրող բնագրային օրինակ Շիրվանզադեից («**Եգիպտահայը** եռանդուն է, աշխատասեր, լրջմիտ»), ինչպես նաև ածականի իմաստով՝ «Եգիպտոսի հայերին հատուկ վերաբերող, Եգիպտոսի հայերի» (սնունդի համար ինքնահնար բառակապակցություններ են տրված՝ **եգիպտահայ կյանք**, **մամուլ**, **գրականություն**)<sup>26</sup>: Էդ. Աղայանի բառարանը հետևում է ակադեմիականին<sup>27</sup>:

Հոմանիշների բառարանում **եգիպտահայ**-ը **հայ** բառահոդվածում է՝ հայերի տարբերակումն ըստ երկրների ներկայացնող բազմաթիվ բառերի շարքում՝ **ռուսահայ**, **վիրահայ**, **ամերիկահայ**, **հնդկահայ**, **պարսկահայ** /**իրանահայ**, **ռումինահայ**, **բուլղարահայ** և այլն<sup>28</sup>, թեպետ դրանք հոմա-

17 Տե՛ս Գյուրջիյան Գ., «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի ներկայացումը հայերեն թարգմանական բառարաններում, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2017, N 2, էջ 59-77:

18 Հայ-ռուսերեն բառարան, Եր., 1984, էջ 201:

19 Տե՛ս Բադրամյան Ռ., Խալիլով Ի., Հայ-ադրբեջաներեն բառարան, Եր., 1978, էջ 122:

20 Տե՛ս Գույումձյան Մ., Ընդարձակ բառարան հայերեն անգլիերեն, Գահիրե, 1950, էջ 164:

21 Ի դեպ, հայերեն-անգլերեն հայաստանյան բառարանում ևս միայն գոյական է համարվել և թարգմանվել Egyptian Armenian (տե՛ս Բարսթյան Ն. Ռ. և ուրիշ., Հայերեն-անգլերեն բառարան, Եր., 2002):

22 Տե՛ս Թևթեան Յ., Բառարան հայերենի սպաներեն, Պուլնոս Այրլեն, 1984, էջ 180:

23 Տե՛ս Գյուրջիյան Գ., «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի բառարանագրական վերլուծություն, «Էջմիածին», 2017, N Ժ, էջ 37-68:

24 Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, Եր., 1944, էջ 549:

25 Ճեղճեան Գ., Տօսիկեան Փ. Կ., Տէր Խաչատուրեան Ա., Հայոց լեզուի տր բառարան, հատ. 1, Բեյրութ, 1992, էջ 525:

26 Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 1, Եր., 1969, էջ 540:

27 Տե՛ս Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 317:

28 Տե՛ս Սուրիայան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 361:

նիշներ չեն, այլ իմաստային միևնույն դաշտի միավորներ:

Հանգաբառարանում «արաբական երկրի հայ» նշանակող բառերից ընդգրկվել են **եգիպտահայ**-ը, ինչպես և **սիրիահայ**-ն ու **լիբանանահայ**-ը<sup>29</sup>: Քերականական բառարան-տեղեկատուում նշվում է հոգնակիի վերջավորությունը՝ **-եր**<sup>30</sup>:

**Եգիպտահայ**-ը արևելահայերենի ազգային կորպուսում հանդիպում է 321 համատեքստում<sup>31</sup>: Քննարկվող բառախմբում բարձր հաճախականություն ունեցող բառն է (ԱՐԵՎԱԿ-ի նյութի թարմացման դեպքում հնարավոր է՝ պատկերն այլ լինել):

**Եգիպտահայ**-ից կազմվել է **եգիպտահայություն** հավաքական գոյականը<sup>32</sup>:

**Հայ** վերջնաբաղադրիչով բառեր կազմվել են նաև Եգիպտոսի հայաշատ քաղաքների անուններից. բառերի առաջին բաղադրիչներ են դարձել **Կահիրե**-ն և **Ալեքսանդրիա**-ն:

**Ալեքսանդրիահայ**: Գործածվում է արևմտահայերենում՝ **դ**-ով: Քանի որ անունը վերջանում է **ա**-ով, բառակազմության ժամանակ հոդակապ չի կիրառվել (հմտ. **անգլիահայ, բելգիահայ, մոսկվահայ** և այլն): XX դ. 30-ականներին Կահիրեի «Արև» պարբերականը նյութեր էր տպագրում Ալեքսանդրիայի հայ համայնքից՝ այսպիսի խորագրերի ներքո՝ «**Ալեքսանդրիահայ կեանք**» (19.02.1930, 10.05.1930) կամ «**Ալեքսանդրիահայ կեանք**» (20.01.1933, 23.01.1933), «**Ալեքսանդրիահայ լուրեր**» (12.03.1935, 10.05.1935): Հանդիպում է այլ խոսքաշարում ևս, ինչպես՝ «Տեղի ունեցաւ .... **Ալեքսանդրիահայ** որբուհիներու տարեկան հանդէս-հաւաքոյթը» (4.02.1935):

Այսօր էլ հազվադեպ գործածվում է Սփյուռքի լրատվամիջոցներում: Հմտ. «...**Ալեքսանդրիահայ** համայնքին մասին» (<http://asbarez.com>, 29.06.2012), «Մ. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ առաջնորդարանի դահլիճին մէջ հանդիպում ունեցաւ **ալեքսանդրիահայ** համայնքի անդամներուն հետ» ([www.aztagdaily.com/archives/59469](http://www.aztagdaily.com/archives/59469))<sup>33</sup>:

**Կահիրեահայ** / արևմտ. **գահիրէահայ**: Կազմվել է երկրի մայրաքաղաքի անունից և գրավոր խոսքում հանդես է գալիս տարբերակներով՝ պայմանավորված արևելահայերենի և արևմտահայերենի հնչական առանձնահատկություններով: Հմտ. «**Կահիրեահայ** պատանին հետաքրքրված էր տեղի բժշկական համալսարանով» (<http://hayernaysor.am/archives/3288>, 18.08.2011) և «**Գահիրէահայ** բոլոր ակումբները փակ կը մնան անապահովութեան հետևանքով» ([www.armaveni.com](http://www.armaveni.com), 06.12.2012):

Այս բառն անշուշտ նոր չէ: Այդպես կարծելու հիմք է տալիս նրանից կազմված **կահիրեահայություն** հավաքական անունը, որ վերոհիշյալ օրի-

29 Հայոց լեզվի հանգաբառարան, Պ. Պողոսյանի խմբագրությամբ, Եր., 1976, էջ 300:

30 Տե՛ս **Գյուրջինյան Գ.**, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Եր., 2007:

31 Տե՛ս [www.eanc.net](http://www.eanc.net) (Արևելահայերենի ազգային կորպուս): Բառը, սակայն, տեղ չի գտել հայերենի հաճախականության բառարանում, որտեղ **եգիպտա**- բաղադրիչով կան միայն **եգիպտական** (առանձին նաև **եգիպտական հիվանդություն**), **եգիպտացորեն**, **եգիպտաբյուզանդական** (տե՛ս **Ղազարյան Բ.**, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Եր., 1982, էջ 466, 312):

32 Հմտ. **Գյուրջինյան Գ.**, Հայ հավաքականությունն նշանակող հայերեն բառային միավորները, «ՎԷՄ», 2018, N 2, էջ 114-124:

33 Արևմտահայերեն մամուլում և գրականության մեջ այս կարգի բառերն առ այսօր գրության երկձևություն ունեն (մեծատառ և փոքրատառ), որ կտեսնենք նաև այլ բառերի դեպքում:

նակներից տասնամյակներ առաջ է գործածվել: Հմնտ. «Կահիրեահայու-թյունը ապահովում է իր սիրած Գալուստյան վարժարանի կարիքավոր երեխաների դպրոցական սնունդը» (Ս. Կապուտիկյան, «Քարավանները դեռ քայլում են»<sup>34</sup>, 1963–64 թթ.):

### Արաբահայ

Բառաինաստային այս խմբի միջուկային անդամ է **արաբահայ** բառը, որ ընդհանուր անուն է, հասկացության հիմնական իմաստի կրողը: Իբրև բառակազմական միավոր՝ XX դ. սկզբի իրողություն է, ժամանակագրական առումով **եգիպտահայ**-ից հետո երկրորդն է: Հմնտ. «Կաթոլիկ-Հայերը հին **արաբահայ** գաղթականության ողորմելի հետքերն են Տէր-Ջօրի մէջ» («Ժամանակ» (Կ. Պոլիս), 28.06–11.07.1911): Այս բառը իմաստային և կիրառական ուշագրավ առանձնահատկություններ ունի<sup>35</sup>:

Եթե **եգիպտահայ**-ը, օրինակ, արտահայտում է հստակ տարրորոշված իմաստ՝ «եգիպտոսի հայ», ապա **արաբահայ** բառի իմաստը չտարրորոշված է՝ «արաբական երկրների հայ», «արաբական երկրներում ապրող հայ» կամ էլ «արաբական երկրների հայերին վերաբերող՝ առնչվող», գոյականի և ածականի արժեքներով: Գործածվում է տարաբնույթ տեքստերում՝ ա) գեղարվեստական.

Կեն ենք մենք,  
Չլինեինք կեն՝  
Հայ կլինեինք,  
Եվ ոչ թուրքահայ,  
Կամ **արաբահայ**,  
Կամ ֆրանսահայ... (Գ. Էմին, «Մենք»)<sup>36</sup>:

բ) գիտական. «Հայրենադարձության ուղղությամբ նրա ձեռնարկած քայլերը լայն արձագանք գտան սփյուռքով մեկ, հասնելով նաև **արաբահայ** գաղթօջախներին»<sup>37</sup>:

Հետաքրքրական է, որ հարյուրամյա այս կազմությունը, որ ընդհանուր անուն է, սահմանափակ գործածություն և ցածր հաճախականություն ունի: Ինչպես վկայում են մեր հարցումները, բառն ընկալվում է որպես նոր բառ, անգամ դիպվածային կազմություն<sup>38</sup>: Բառարաններում չի արձանագրվել:

**Արաբահայ**-ից կազմվել է **արաբահայություն** հավաքականը: Օրինակ՝ «Բարձրագույն ուսման հետամտող բազմահարյուր հայ երիտասարդներ

34 Կապուտիկյան Ս., երկերի ժողովածու երկու հատորով, հատ. 2, եր., 1973, էջ 224:

35 Բեյրութում 1940 թ. հրատարակված մի գրքույկի վերնագիրն է «**Արաբահայ** դրամագիտական պատմություն»: Այստեղ բառիմաստը չի առնչվում «արաբական աշխարհի հայ» հասկացությանը, այլ նշանակում է «արաբական տիրապետության շրջանի հայկական»: Նաև սա՝ «**Արաբահայ** մերձեցումները սկսվել էին արաբների կողմից Հայաստանը նվաճվելուց շատ դարեր առաջ» (տե՛ս Մկրտչյան Ն., «Արաբական փոխառություններ հայերենում (նախքան արաբների արշավանքը Հայաստան)», «Լրաբեր» հաս. գիտ., 1984, N 2, էջ 72), որտեղ **արաբահայ**-ը հատվածական բաղադրություն է և նշանակում է «արաբա-հայկական»:

36 Էմին Գ., երկերի ժողովածու երեք հատորով, հատ. 2, եր., 1985, էջ 169:

37 Նաջարյան Ե. Հ., Հայ-արաբական մշակութային կապերը (Միրիա, Լիբանան) 1945-1970 թթ., «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. VI, եր., 1974, էջ 248:

38 Դիպվածային բառերի մասին նշվում է, որ «հատուկ նպատակով ստեղծված այդ բառերը մեծ մասամբ ունենում են բաղադրիչների անսովոր համադրություն: ... անմիջապես աչքի են ընկնում իրենց նորությամբ և անսովորությամբ ուշադրություն գրավում» (տե՛ս Ղարաբաջյան Թ. Ա., Դիպվածային և պոստեմպիրա բառերը ժամանակակից հայերենի բառատեղծման համակարգում, «Լեզվի և ոճի հարցեր», հատ. VII, եր., 1983, էջ 199):

արտագաղթում են Արևմտյան Եվրոպա և Միացյալ Նահանգներ, որտեղ նրանք «կորչում են» ոչ միայն **արաբահայության**, այլև ընդհանրապես հայության համար»<sup>39</sup>:

## Սուդանահայ

**Սուդանահայ**-ի գործածության վկայություններ ունենք XX դ. 10-ականներից: Փաստացի **սուդանահայ** բառը ծնվել է Սուդանի հայ համայնքի ձևավորմանը զուգընթաց (Եգիպտոսի և Հաբեշտանի հարևան Սուդանում հայերը հաստատվել են XIX դ. վերջերից): Հարուստ գաղութն ապրել է ազգային կյանքով, ունեցել է եկեղեցի, դպրոց, մարզավան, միություններ, վայելել երկրի բարձրագույն իշխանության հարգանքը: Անցյալ դարի 60-ականներին Սուդանում կար 800 հայ: Ներկայումս երկրում մի քանի հայ ընտանիք է մնացել:

**Սուտանահայ** ձևով բառը նախ գործածվել է գրական արևմտահայերենում, մասնավորապես Եգիպտոսի և Կ. Պոլսի հայ մամուլում: Հմնտ. «**Սուտանահայ** գաղութը»<sup>40</sup>, «**Սուտանահայ** արձագանգ» («Արև», 8.11.1915): Փաստ է, որ բառը հարյուրամյա պատմություն ունի և հետազոտվող բառախմբի ամենահին կազմություններից է: Սկզբնական շրջանում միայն ածականի արժեք ուներ:

**Սուդանահայ** տարբերակը գոյականի և ածականի արժեքներով ավելի ուշ սահմանափակ գործածվել է արևելահայերեն գիտական գրականության մեջ և մամուլում: Օրինակ՝ «...համայնքի անունից իրենց շնորհակալությունն են հայտնել կառավարությանը՝ **սուդանահայերի** նկատմամբ ցուցաբերած հոգատարության առթիվ»<sup>41</sup>:

Հազվադեպ պատահում է նաև այսօր, ինչպես՝ «**Սուտանահայերը** մեծամասնությամբ զարգացած, արուեստասէր և կեանքի մեջ յաջողած անձնաւորութիւններ են» ([www.aztagdaily.com/archives/177910](http://www.aztagdaily.com/archives/177910)): Այստեղ արդեն գոյականի արժեքով է: Թեև հին կազմություն է, սակայն բառարանային գրանցում չունի<sup>42</sup>:

**Սուդանահայ**-ից կազմվել է հազվադեպ **սուդանահայություն** հավաքական գոյականը: Օրինակ՝ «**Սուտանահայութիւնը** բաւականին լաւ կազմակերպուած գաղութի սը երևոյթն ունի» (1964 թ. նյութ է. «Ազատ օր», 14.03.2014):

39 **Նաչաբյան Ե. Հ.**, Հայ-արաբական մշակութային կապերը, էջ 259:

40 «Ամէնուն տարեցոյցը», Կ. Պոլիս, 1913, էջ 188: Ըստ Ա. Աբրահամյանի «Հայ գաղթականության պատմություն» գրքի (հատ. Բ, էջ 77, որտեղ բառը դ-ով է տրված):

41 **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Բ, էջ 82:

42 Տե՛ս **Գյուրջիյան Դ.**, «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառարանային գրանցում չունեցող բառային միավորների քննություն, «Էջմիածին», 2018, հատ. Ա, էջ 57-77:



## Պաղեստինահայ

Ժամանակագրական տեսանկյունից **պաղեստինահայ** բառը բավական հին է: Հմնտ. «Պաղեստինահայ կեանքը» («Արև», 2.11.1928):

Պատմական Պաղեստինի տարածքում հայերը հաստատվել են վաղ ժամանակներից: Երուսաղեմում հայերը մշտական ներկայություն ունեն 4-րդ դարից սկսած, 7-րդ դարում այստեղ հիմնադրվել և ցայսօր գործում է Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկը՝ Երուսաղեմի պատրիարքությունը:

**Պաղեստինահայ**-ը երբևէ ակտիվ չի գործածվել, սակայն այսօր էլ հանդիպում է արդի հայերենի գրական երկու տարբերակներում: Օրինակներ՝ «... գալիք սերունդները պատրաստ են հայրենիքին, Հայաստանեայց եկեղեցույ և **Պաղեստինահայ** համայնքներուն ... օգտակար հանդիսանալու համար» («Նոր օր» (ԱՄՆ), 29.12.2016, էջ 23), «Նրա հայրը **պաղեստինահայ** է, մայրը՝ ավստրալիացի» ([www.news.am/arm/news/308820.html](http://www.news.am/arm/news/308820.html)):

1948 թ. Իսրայելի պետության ձևավորումից հետո **պաղեստինահայ**-ի գործածությունն էապես նվազեց, քանի որ նրա «բեռնվածությունը» բաշխվեց նաև **իսրայելահայ** բառի վրա:

**Պաղեստինահայ**-ը որևէ բառարանում չի գրանցվել: Կազմվել է սակավադեպ **պաղեստինահայություն** հավաքականը. հմնտ. «Պաղեստինահայությունը կապրի ոգևորիչ եռուզեռը ներգաղթի օրերուն» («Էջմիածին», 1948, N 1-2, էջ 42):

Բառաիմաստային այս խմբի մեջ կարող ենք գետնդել **երուսաղեմահայ** և **սաղիմահայ** տարբերակային բառերը, որոնց առաջին բաղադրիչը երեք կրոնների մայրաքաղաքի անվան տարբերակներն են: Օրինակ՝ **Սաղիմահայ** կեանքէն («Արև», 8.10.1927):

**Սաղիմահայ**-ը տեղ է գտել նորաբանությունների բառարանում և բացատրվել «Երուսաղեմի Սաղիմ բնակավայրում ապրող»<sup>43</sup>, այնինչ Սաղեմը հենց Երուսաղեմն է<sup>44</sup>, ուստի հարկ էր ուղղակի ասել՝ «Երուսաղեմում ապրող հայ»: **Սաղիմահայ**-ը, ինչպես ցույց տվեց բնագրային վերոհիշյալ օրինակը, նորաբանությունն չէ, պարզապես մինչև վերջերս բառը չէր արձանագրվել բառարաններում:

**Երուսաղեմահայ**-ը բոլորովին վերջերս բառարանային գրանցում է ստացել<sup>45</sup>:

## Սիրիահայ

1920-ականներին «երկրանուն+հայ» մասնակաղապարի հիման վրա կազմվել է արևելահայերեն **սիրիահայ** բառը: Քանի որ արևմտահայերենում երկրանունը Սուրիա է, Սիրիա տարբերակը ևս կա. մամուլում և գրականության մեջ կարելի է տեսնել ինչպես **սուրիահայ**, այնպես էլ **սիրիահայ** տարբերակները: Արևմտահայերենում այժմ գործածվում է գերազանցապես

43 Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002, էջ 413:

44 Սաղեմ-ը Երուսաղեմի հին անունն է (Ծննդ. ԺԴ 18, Եբր. Է 1,2), որը հետագայում այլաբանորեն էր տրվում Երուսաղեմին (Սաղմ. ՀՁ, 2) (տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 475):

45 Տե՛ս Գալստյան Ա. Ս. և ուրիշներ, Նոր բառերի բառարան, Դ. պրակ, Եր., 2018, էջ 45:

**սուրիահայ**-ը: **Սիրիահայ/սուրիահայ**-ը Սիրիայի հայերին անվանող ընդհանուր անունն է:

Նախ կազմվել են բառի արևմտահայերեն տարբերակները: Այսպես. «... ամբողջ **Սուրիահայ** գաղութին առիթ կընծայէ հանգանակութեան գործը ձեռք առնելու» («Սուրիական մամուլ», 13.04.1922): 1924-ին Հալեպում լույս է ընծայվել «**Սուրիահայ** տարեցոյցը» (հետագայում նույնպես): Սա նշանակում է, որ 20-րդ դարի 20-ականներին **սուրիահայ/սուրիահայ** բառի գործածությունը սովորական էր:

Սիրիայի հայ գաղթավայրը հնագույններից է (սերկայիս Սիրիան զբաղեցնում է պատմական Ասորիքի տարածքի հիմնական մասը): Տիգրան Մեծը մ.թ.ա. 82-64 թթ. նվաճեց Ասորիքը (Միջերկրականի ամբողջ եզերքը՝ սկսած Պաղեստինի հյուսիսային սահմանից մինչև Եփրատ և Կիլիկիայի սահմանը, այժմյան Սիրիայի և Լիբանանի տարածքը), ընդգրկեց հայոց պետության կազմի մեջ, և հայերն սկսեցին բնակություն հաստատել այնտեղ<sup>46</sup>:

Արաբների տիրապետության շրջանում գլխավոր գաղթավայրը Դամասկոսն էր<sup>47</sup>: Հայերն արաբական երկրներ էին տեղափոխվում նաև բյուզանդացիների կրոնական հալածանքից ազատվելու նպատակով<sup>48</sup>: VIII դ. սկզբից հայերը սկսեցին Հայաստանից Սիրիա գնալ և առաջին քառորդում արդեն նշանակալի թիվ էին կազմում<sup>49</sup>: Նվաճված Հյուսիսային Սիրիան քրիստոնյաներով ամրացնելու նպատակով Բյուզանդական կայսրությունը IX-XI դդ. մեծաթիվ հայերի գաղթեցրեց այնտեղ: Շուտով այդ շրջանը համատարած հայկական դարձավ<sup>50</sup>: X դ. Սիրիայում հիմնվեց հայոց թեմ:

Սիրիայում հայերի թիվը մեծացավ Բագրատունիների թագավորության անկումից հետո (1045 թ.): Հույների հետ հայերը տիրապետող դիրք ունեին Անտիոքում. XI դ. կուսակալների մեծ մասը հայ էր: XIII դ. Անտիոքի դերն սկսեց նվազել, և հայ գաղթականության կենտրոնը դարձավ Հալեպը: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375 թ.) հայերի գանգվածային գաղթ եղավ Սիրիա:

Սիրիայի հայկական համայնքները վերելք ապրեցին XV-XVI դդ., երբ 1453 թ. Կ. Պոլսի գրավումից հետո առևտրի ուղիներն սկսեցին անցնել Հալեպով: XVI-XVIII դդ. Հալեպի հայերի մեջ կային ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանից գաղթածներ (Ջուղա, Երևան, Ղարաբաղ, Սեբաստիա, Ակն, Սալաթիա, Սասուն, Արաբկիր և այլն): Հայերի վիճակը ծանրացավ XVI դ. վերջից, երբ օսմանյան կառավարիչների հրահրմամբ սկսեցին ձնշել քրիստոնյաներին: 1652 թ. Հալեպի հայերը 20 հազարից ավելի էին<sup>51</sup>: Հայաշատ էին Հալեպ-Ալեքսանդրետ առևտրական ուղու երկայնքի բնակավայրերը (Ալեքսանդրետ, Անտիոք, Բեյլան), Լաթաքիայի շրջակայքի քաղաքներն ու գյուղերը: Միսսա լեռան շրջանը գրեթե ամբողջովին հայաբնակ էր: XVIII դ. սկզբին հայերը, որ Հալեպի տնտեսական կյանքում կարևոր դեր ունեին, քաղաքի նշանակության նվազման հետևանքով թուլացան: XIX դ.

46 Տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, էջ 428:

47 Տե՛ս Աճառյան Ա., Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002, էջ 398-399:

48 Տե՛ս Ալպոյաճեան Ա., Պատմություն հայ գաղթականության. Հայերու ցրումը աշխարհի գանազան մասերը, հատ. Ա, Քրիստոսէ առջ Ջ դարէն մինչև ԺԱ դար Քրիստոսի, Գահիրէ, 1941, էջ 362-363:

49 Տե՛ս Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 360:

50 Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 428:

51 Տե՛ս «Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.)», հատ. 2, Եր., 2003, էջ 321:

ամենամեծ համայնքը դարձյալ Հալեպինն էր (2-3 հզ.): Անտիոքում և մերձակա գյուղերում բնակվել է մոտ 5 հզ. հայ, հոծ հայություն կար Ալեքսանդրետում, Բելլանում, Սվեդիայում, Փայասում, Քեսաբում: 1880-1890-ականներին Սիրիայի հայերի թիվը 77 հզ. էր: Հայության կենտրոնը Հալեպն էր, հայեր ապրում էին նաև Դամասկոսում, Հոմսում, Համայում և այլ բնակավայրերում:

Հայերի զանգվածային գաղթ եղել է 1915 թ. ցեղասպանությունից հետո (Սիրիայի ներկայիս համայնքը ձևավորվել է 1920-ականների սկզբին Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից գաղթածներով): Գաղթականները կենտրոնացել են գլխավորապես Հալեպում: 1918 թ. Հալեպում և շրջակայքում 60 հզ. հայ կար, ամբողջ երկրում՝ 142 հզ.: Հայության մի նոր տեղաշարժ եղավ 1939 թ., երբ Թուրքիան բռնազավթեց Սիրիայի Ալեքսանդրետի սանջակը. շուրջ 35 հզ. հայ տեղափոխվեց երկրի տարբեր բնակավայրեր, Լիբանան, մի մասը հայրենադարձվեց:

Սիրիայի հայերը միշտ կարևոր դեր են ունեցել երկրի տնտեսության մեջ, մեծ համբավ ունեին մասնավորապես արհեստավորները, տարբեր ոլորտների մասնագետները: Երկրում գործել են հայկական տասնյակ դպրոցներ, հայրենակցական, մշակութային, մարզական և այլ միություններ, լույս են տեսել շուրջ 150 անուն հայերեն պարբերականներ:

2003-ին Սիրիայի հայերի թիվը շուրջ 65-70 հազար էր<sup>52</sup>: Վերջին տարիների սիրիական պատերազմը մեծ հարված հասցրեց երկրի հայությանը. տասնյակ հազարավոր հայեր դարձան փախստական՝ գալով Հայաստան, ինչպես և սփռվելով աշխարհով մեկ:

**Սիրիահայ/արևմտահայերեն՝ սուրիահայ** բառի սերող հիմքը երկրանունն է (նրա որևէ տարբերակը), իսկ բաղադրող հիմքը՝ **հայ**-ը, քանի որ հայերեն բարդ բառերի ձևխակոդմյան բաղադրիչը սերող հիմք է, իսկ աջակոդմյան բաղադրիչը՝ բաղադրող հիմք<sup>53</sup>: Սերող հիմք են դարձել Սիրիայի տարբեր տեղանուններ:

Մի շարք բառեր կազմվել են քաղաքանուններից:

**Դամասկոսահայ/դամասկահայ:** Կազմվել է Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի անունից: Գործածության վկայություններ կան XX դ. 30-ականներից, ինչպես՝ «Դամասկահայ տարին» («Արև», 13.01.1936): Առանց բառավերջի **ոս** բաղադրիչի տարբերակը բնորոշ է արևմտահայերենին: Օրինակներ՝ «Դամասկահայ ամենուն տարեգիրքը» (Դամասկոս, 1958), «Դամասկահայ գաղութը ապրեցաւ յիշատակելի և բացառիկ երկու օրեր» («Էջմիածին», 2007, Ժ, էջ 143): Սա համապատասխանում է հայերենի բառակազմական օրինաչափություններին. հմնտ. **Եգիպտոս - Եգիպտահայ, Կիպրոս - Կիպրահայ:** Արևելահայերենում, սակայն, **հայ** բաղադրիչը հողակապով միանում է փոփոխության չենթարկվող տեղանվանը՝ **դամասկոսահայ**<sup>54</sup>:

Բառը գործածվում է նաև գոյականի արժեքով: Հմնտ. «Շնորհանդէսին ներկա գտնուեցան ... Արաք գրողներու միութեան անդամներ, **դամասկահայեր** և հայկական հարցով հետաքրքրուողներ» («Նոր աշխարհ», Նիքեա,

52 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 508:

53 Տե՛ս Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 248:

54 Ա. Փաշայանի և Լ. Հարությունյանի «Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ» գրքում (Եր., 2011), օրինակ, 32 անգամ գործածվել է **դամասկոսահայ** բառը և ոչ մի անգամ՝ **դամասկահայ**:

Հունաստան, 3.09.2018):

**Հալեպահայ:** Գաղութահայ մամուլում XX դ. 20–30–ականներից գործածվում է ածականի և գոյականի արժեքներով. «**Հալեպահայ** կեանք» («Արև», 02.11.1926), «Դաղրած են այլևս երբեմնի ամուլ և սնամէջ վէճերը, որոնք ներքնապէս տկարացնելէ ետք **Հալեպահայը**...» («Հայրենիք» օրաթերթ, 29.08.1937): Նաև արևելահայերենում՝ ավելի ուշ:

**Բերիահայ:** Հայկական աղբյուրներում Հալեպի համար գործածված մյուս անունը **Բերիա**-ն է, որից էլ կազմվել է **բերիահայ**-ը (առանց հոդակապի, հմնտ. **ալեքսանդրիահայ**): Խիստ հազվադեպ է: Հմնտ. «...ազգային կեանքը հետզհետէ կը մտնէ բնականոն ճամբու մը մէջ և ստեղծուած ներքին համերաշխութենէն պիտի նպաստաւորուին **Բերիահայ** գործերը» («Հայրենիք» օրաթերթ, 29.08.1937): Ի դեպ, նույն հաղորդման մեջ գործածվել է նաև **հալեպահայ** բառը:

**Լաթաքիահայ:** Բառակազմությամբ նման է **բերիահայ**-ին: Օրինակներ՝ «Մեր ինքնաշարժի մեջ են **լաթաքիահայ** երկու հրավիրակ տիկինները» (**Ս. Կապուտիկյան**, «Քարավանները դէռ քայլում են»<sup>55</sup>), «**Լաթաքիահայ** Մարտիկ Մարտիկեան ծնած է 1992-ին» ([www.kantsasar.com/news/2017/09/06/23691/](http://www.kantsasar.com/news/2017/09/06/23691/)):

**Կամիշլիահայ/արևմտահայերեն՝ գամիշլիահայ:** Համեմատելի է **կահիրեահայ/գահիրեահայ** տարբերակների հետ: «**Կամիշլիահայ** երիտասարդի հուղարկավորությունը տեղի է ունենալու շաբաթ օրը» (<http://hayernaysor.am/archives/173425>): «Պիտի բախտաւորուէինք անձնապէս հանդիպելու ... նախկին **Գամիշլիահայ** ... տիկ. Նայիրի Մկրտիչեանին» («Ազգ», 9.11.2018)<sup>56</sup>:

**Հոմսահայ**-ը խիստ հազվադեպ է, վկայվել է ածականի արժեքով: Օրինակ՝ «Սրբազան Հայրը և ընկերակիցները ... հանդիպում ունեցան **Հոմսահայ** ընտանիքներուն հետ» (<http://ragmamoul.net/hy/diaspora-news/2016/03/23>):

**Անտիոքահայ**-ը գործառական առումով յուրահատուկ է. գործածվել է ոչ թե մարդկանց, այլ բարբառի վերաբերմամբ: Օրինակ՝ «... զգալիորեն տարբերվել է եզրային» (արևելյան Կիլիկիայի և **անտիոքահայ**) խոսվածքներից («Լրաբեր» հաս. գիտ., 1971, N 5, էջ 55):

Գյուղանունից կազմվել է մեկ բառ, թեպետ Սիրիայում հայկական բազմաթիվ գյուղեր են եղել, որոնք, սակայն, հետագայում հայաթափվել-մարել են:

**Քեսաբահայ/արևմտահայերեն՝ քեսապահայ:** Գյուղանունից է կազմվել **քեսաբահայ**-ը: Մամուլում հանդիպում է վերջին շրջանում, հատկապես հայաբնակ գյուղավանի 2014 թ. օրհասական իրադարձությունների ժամանակ, գրավումից և պարպվելուց հետո: Այսպես՝ «... աշակերտութեան դրամահաւաքը՝ **քեսաբահայ** մանուկների օգտին» («Ալիք» (Թեհրան), 7.05.2014), «Հայաստանի մէջ **քեսապահայ** 30–40 ընտանիք մնացած է» ([asbarez.com/arm/197001](http://asbarez.com/arm/197001)):

**Հայ** վերջնաբաղադրիչով բառի առաջին բաղադրիչ է դարձել նաև երկրի հայաշատ տարածաշրջանի անունը:

**Սվեդիահայ/արևմտահայերեն՝ սուևտիահայ:** Կազմվել է համաբանություն հիման վրա, վկայվել ածականի արժեքով. «**Սվեդիահայ** /մուսալեռ-

55 **Կապուտիկյան Ս.**, Երկերի ժողովածու երկու հատորով, հատ. 2, էջ 183:

56 «Քարավանները դէռ քայլում են» ուղեգրության մեջ հեղինակը արևմտահայերենի ազդեցությամբ այս բառը գրում է գ-ով, բայց զեղչում է տեղանվան ի-ն, որ ձիշտ չէ. «Գամիշլիահայերը գորավոր փաստարկներ են բերում» (տես **Կապուտիկյան Ս.**, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 181):

ցիների ինքնության դրսևորումները և կենսապահովման մշակույթի առանձնահատկությունները» («Առավոտ», 17.09.2015):

Այսպիսով՝ «Սիրիայի հայ» հասկացության նշանակիչ են տասը բառային միավորներ (իրենց տարբերակներով), որոնք կազմվել են երկրանունից, քաղաքանուններից, գյուղանունից և տարածաշրջանի անունից: Այս առումով «Սիրիայի հայ» հասկացության հիման վրա ձևավորված բառախումբն ամենաբազմանդամն ու բազմազանն է:

Այս բառերը խիստ տարբեր են գործածության հաճախականությամբ: Եթե **սիրիահայ**-ը կամ **հալեպահայ**-ը գրեթե համագործածական բառեր են, իսկ **դամասկ(ոս)ահայ**-ը՝ սովորական և ընկալելի, ապա **կամիշլիահայ**-ը կամ **հոմսահայ**-ը խիստ հազվադեպ են, հաճախ անծանոթ-անհասկանալի հայերեն խոսող և ընթերցող մարդկանց, քանի որ նրանց հիմնականում անծանոթ են Կամիշլին և Հոմսը:

Թվարկված բառերից մինչև վերջերս բառարանային գրանցում ունեցող միայն **սիրիահայ**-ը: Առաջին անգամ արձանագրվել է հանգաբառարանում, կա նաև ուղղագրական մի բառարանում<sup>57</sup>: Նորաբանությունների նորերս լույս տեսած բառարանում ընդգրկվել է նաև **դամասկոսահայ** բառը<sup>58</sup>:

Քննարկված բառերից կազմվել են հավաքական գոյականներ, ինչպես՝ **սիրիահայություն/սուրիահայություն, դամասկոսահայություն/դամասկահայություն, հալեպահայություն, լաթաքիահայություն**:

## Լիբանանահայ

XX դ. առաջին տասնամյակներում Լիբանան երկրանունից կազմվեց **լիբանանահայ** բառը: Օրինակ՝ «Լիբանանահայ նամականի» («Արև», 18.11.1931):

Այժմյան Լիբանանի տարածքում հայեր ապրել են հնագույն ժամանակներից սկսած: Տիգրան Մեծը մ.թ.ա. I դարում հայեր է բնակեցրել նաև Ատրիքին հարող փյունիկյան տարածքում: Հայաստանը հյուծող արտագաղթի միջոցով ժամանակ առ ժամանակ համալրվել է Լիբանանի հայ համայնքը: XII-XIII դդ. Տրիպոլի և Սայդա քաղաքներում կային հայ համայնքներ, որոնք Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո ավելի մարդաշատ են դարձել:

Տարբեր պատճառներով հայերի հոսքն այս երկիր ավելացել է XVII դ. կեսից: Այդպիսի մի շրջան էր XIX դ. 20-30-ականները, երբ Կ. Պոլսում և Թուրքիայի գավառներում մեծացել էր կաթոլիկների ճնշումը: Հայ կաթոլիկները շուտով ձուլվեցին դավանակից արաբներին<sup>59</sup>:

Հայ առաքելական եկեղեցու հետևորդների հոսք եղավ հատկապես 1894-1896 թթ. համիդյան և 1909 թ. Ադանայի կոտորածներից հետո: Լիբանանը հայերին գրավում էր ինչպես տեղացիների բարյացակամությամբ, քրիստոնեական տարրի առկայությամբ, այլև նրանով, որ երկրի լեռնային մասում հաստատված ինքնավարությունում հայերը կարևոր դիրք էին զբաղեցնում (նրանցից երկուսը անգամ կառավարիչ են դարձել):

57 Տե՛ս «Հայոց լեզվի հանգաբառարան», եր., 1976, Միխատևան Մ., Հայերեն արևմտալեզու ուղղագրության բառարան, Ժնև, 2000 (տպվել է ընդամենը 25 օրինակ): Այստեղ չկա արևմտահայերեն սուրիահայ տարբերակը: 58 Տե՛ս Գալստյան Ա. Ս. և ուրիշներ, Նոր բառերի բառարան, Գ. պրակ, էջ 37:

59 Տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատ. Բ, էջ 13:

Առաջին աշխարհամարտից առաջ Լիբանանի Բեյրութ քաղաքում ապրել է շուրջ 1500 հայ՝ գաղթած Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից: Հայեր ապրում էին նաև ծովափնյա քաղաքներում և լեռնային բնակավայրերում:

1918 թ. հոկտեմբերին երկրից օսմանյան զորքերին քշելուց (այս գործին մասնակցել են նաև հայ լեզեռնականները) և ֆրանսիական իշխանություն հաստատելուց հետո տասնյակ հազարավոր հայեր հաստատվել են Լիբանանում: Այնուհետև նրանց են միացել Կիլիկիայի հայ գաղթականները: 1923–1924 թթ. Լիբանանում բնակվել է 35–40 հազար հայ: Թեև նրանց մի մասը մի քանի տարի անց գաղթել է Հարավային Ամերիկա, այնուամենայնիվ հայերը մեծ թիվ էին կազմում. 1932–ին նրանք 35 հազար էին: 1939–ին նրանց ավելացան Ալեքսանդրեթի սանջակից գաղթածները: 1945–ի վերջին Լիբանանի հայերը 70 հազարից ավելի էին, 1953–ին՝ շուրջ 84 հազար (1946–1948 թթ. մոտ 10 հազար մարդ գաղթել է Հայաստան): 1960–ականներին այս երկիր են տեղափոխվել բազմահազար սիրիահայեր: 1975–ի քաղաքացիական պատերազմից առաջ Լիբանանում ապրում էր 200 հազար հայ:

Քաղաքացիական երկարատև պատերազմի ընթացքում համայնքը հարյուրավոր զոհեր տվեց, հազարավոր հայեր հեռացան երկրից:

Հայերը շատ շուտ կարողացել են կարևոր տեղ զբաղեցնել Լիբանանի տնտեսության մեջ, կրթական, հոգևոր, մշակութային, մարզական աշխույժ կյանք են ստեղծել: Լիբանանի Անթրիպիատում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանը: Հավանական է, որ այժմ Լիբանանում ապրում է 60–70 հազար հայ: Հայախոս են:

**Լիբանանահայ** բառն արձանագրվել է ուղղագրական, քերականական բառարաններում, հանգաբառարանում<sup>60</sup>, նաև թարգմանական բառարանում<sup>61</sup>, ընդամենը վեց անգամ: Բացակայում է արևմտահայերենի բացատրական բառարաններից (ընդ որում դրանցից մի քանիսը կազմվել և հրատարակվել են Բեյրութում):

Արևմտահայերենում գործածվում է բառի **լիբանահայ** տարբերակը: Օրինակ՝ «**Լիբանահայ** գաւառականի խնդիրը» («Արև», 27.01.1928):

Եթե **լիբանանահայ**-ի առաջին բաղադրիչը հայերենում V դարից գործածվող (Աստվածաշնչի գրաբար թարգմանության մեջ բազմիցս վկայված) **Լիբանան** երկրանունն է, ապա **լիբանահայ**-ի դեպքում՝ **Լիբան**-ը (< ֆրանս. Liban): 1950–ին բառն արդեն գրանցված էր Մ. Գույումձյանի բառարանում<sup>62</sup>, որ նշանակում է՝ ավելի վաղ է կազմվել:

Երկրանունից գատ բառի առաջին բաղադրիչ են դարձել Լիբանանի հայաշատ մայրաքաղաքի և Ջահլե հայաբնակ քաղաքի անունները:

**Բեյրութահայ**/արևմտահայերեն՝ **պէյրութահայ**: Բառը գործածության

60 Տե՛ս **Բարսեղյան Հովհ.**, Հայերեն ուղղագրական–ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., 1973, Հայոց լեզվի հանգաբառարան, Եր., 1976, էջ 300, **Մինասեան Մ.**, Հայերէն ասանդական ուղղագրութեան բառարան, Ժնև, 2000, **Նազարյան Ռ., Գյուղական Ա.**, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Եր., 2004, **Գյուրջիյան Դ.**, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան–տեղեկատու, Եր., 2005:

61 Տե՛ս **Թէքէեան Յ.**, Բառարան հայերէնէ սպաներէն, Բուենոս Այրես, 1984:

62 Տե՛ս **Գույումձեան Մ.**, Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Գահիրէ, 1950: Հմտ. Ս. Վարժապետյանի գրքի վերնագիրը՝ «Պատմութիւն Լիբանահայ գաղութի՝ հնագոյն դարերէն մինչև Ա. ընդ. պատերազմին վերջաւորութիւնը» (Բեյրութ, 1951):

մեջ է մտել անցյալ դարի առաջին տասնամյակներին, երբ Մեծ եղեռնից մազապուրծ հազարավոր հայ գաղթականներ Բեյրութում համայնք կազմավորեցին: Օրինակ՝ «**Պեյրութահայ** կենսք» («Արև», 01.06.1930):

Արևելահայերենում հանդիպում է մամուլում, հրապարակագրության մեջ, ուղեգրություններում, հանրագիտարաններում:

Տարբերակներից միայն **պեյրութահայ**-ն է վկայված Մ. Մինասյանի ուղղագրական բառարանում, **բեյրութահայ**-ն անտեսվել է (**սիրիահայ**-ի դեպքում ճիշտ հակառակն է):

**Զահլէահայ:** Հազվադեպ է, վկայություն ունենք XX դ. 30-ականներից (հայերն այս քաղաքում հաստատվել են Առաջին աշխարհամարտի տարիներին, ապա՝ Կիլիկիայի հայաթափումից հետո. 1927-ին այստեղ ապրում էր շուրջ 2000 հայ). «**Զահլէահայ** նամականի» («Արև», 10.07.1934):

Հարց է առաջանում. ինչո՞ւ չի կազմվել, օրինակ, **տրիպոլիահայ** կամ **թրիպոլիահայ** (Լիբանանի Տրիպոլի քաղաքում Կիլիկիայի պարպումից հետո շուրջ 2000 հայ է հաստատվել, եղել են երեք հարանվանությունների եկեղեցիներ, դպրոցներ, տարբեր միություններ, թեև գաղութը հետագայում նստրացել է<sup>63</sup>), երբ կա **կամիշլիահայ:** Այս պահին չկա այդ բառը, բայց կարող է լինել: Այն պոտենցիալ բառ է: Պոտենցիալ բառերն ազատորեն ստեղծվում են բարձր կենսունակություն ունեցող բառակազմական կաղապարների հիման վրա, ամեն անգամ նրանք ոչ թե վերարտադրվում են, այլ վերստին ստեղծվում, երբ խոսքում տվյալ երևույթն անվանելու կարիքն է առաջանում, քանի որ պոտենցիալ գոյություն ունեն լեզվում<sup>64</sup>: Ենթադրյալ **տրիպոլիահայ** կամ **թրիպոլիահայ** կազմությունը հայերենի պոտենցիալ բառապաշարի<sup>65</sup> միավորներից է:

Անշուշտ չի բացառվում, որ այս և համանման կազմություններ գործածվել են անցյալի մամուլում, գրականության էջերում և առ այսօր չեն նկատվել:

## Իրաքահայ

**Իրաքահայ** բառը կազմվել է ամենայն հավանականությամբ XX դ. առաջին կեսին արևմտահայերենում: Օրինակ՝ «**Իրաքահայ** ներգաղթի Ա. կարավանի մեկնումը դէպի հայրենիք» («Արև», 30.10.1947)<sup>66</sup>: Բառն այնուհետև գործածվել է նաև արևելահայերեն գիտական գրականության մեջ և մամուլում:

Ներկայիս Իրաքի տարածքում հայերը հիշատակվում են վաղ ժամանակներից: Մ. թ. ա. 83-ին Տիգրան Մեծը գրավել է Մոսուլը, որից հետո հայերը սկսել են հաստատվել այնտեղ: 641-ի Հայաստան կատարած արաբական արշավանքներից հետո 35 հազար հայեր են գերեվարվել Միջագետք ու Արաբական թերակղզի: Իրաքահայ գաղութը, սակայն, ձևավորվել է ավելի ուշ՝ VIII-XIII դդ., առանձնանում էին հատկապես Բաղդադի և Բասրայի

63 Տե՛ս «Հայ Սիյոռք» հանրագիտարան, էջ 296-297:

64 Տե՛ս **Ղարազյուլյան Թ. Ա.**, Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում, էջ 213:

65 Տե՛ս **Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարազյուլյան Թ. Ա.**, Լեզվաբանական բառարան, եր., 1975, էջ 262:

66 Թե՛ն նոր բառ չէ, վերջերս գրանցվել է նոր բառերի բառարանում (տե՛ս «Նոր բառեր», Ա պրակ, կազմողներ՝ **Գալստյան Ա.** և ուրիշներ, եր., 2015):

գաղութները: XVII դ. սկզբին և XIX դ. վերջին գաղութը համալրվել է Պարսկաստանից և Թուրքիայից եկած հայերով: 1915 թ. զարհուրելի ջարդերից հետո մեծաթիվ հայեր տեղափոխվել են Իրաք. 1920-ականներին այստեղ կային 30 հազար հայ գաղթականներ: 1970-ական թվականներին Իրաքի հայերը 20 հազար էին, քանի որ մեծ հոսք եղավ Արևմուտքի երկրներ, մոտ հազար մարդ եկավ Հայաստան: Գաղթ եղավ (հիմնականում՝ Հորդանան և Սիրիա) նաև իրաքա-իրանյան, ինչպես նաև Ծոցի պատերազմի պատճառով: 2003-ին Իրաքում բնակվում էր շուրջ 10 հազար հայ:

**Հայ** վերջնաբաղադրիչով բառեր կազմվել են նաև Իրաքի հայաշատ քաղաքների անուններից: Ամենավաղ կազմությունը բաղադրվել է երկրի մայրաքաղաքի անունից:

**Բաղդադահայ/արևմտահայերեն՝ պաղտատահայ:** XX դ. առաջին տասնամյակներին արդեն գործածվում էր գրավոր արևմտահայերենում: Հմմտ. «Արև» թերթի խորագրերի և հրատարակումների վերնագրեր՝ «**Պաղտատահայ** կեանքէն» (21.06.1927), «**Պաղտատահայ** կնճիռը» (3.12.1929), «**Պաղտատահայ** կեանք» (8.08.1930)<sup>67</sup>:

**Բասրահայ/արևմտահայերեն՝ պասրահայ:** Խիստ հազվադեպ է թե՛ արևելահայերենում, թե՛ արևմտահայերենում: Հմմտ. «**Բասրահայ** համայնքի մասն են կազմում Բասրայից 7 կմ հեռու գտնվող Մարգիլի հայերը»<sup>68</sup>, «... ներկայութեամբ քոյր Եկեղեցիներու հոգևորականներու և **պասրահայ** հաւատացեալներու» («Էջմիածին», 2008, Ը, էջ 150):

**Մոսուլահայ:** Գործածության եզակի վկայություններ կան, ինչպես՝ «**Մոսուլահայ** համայնքը կազմավորվել է XIX դ., հետագայում անկում է ապրել»<sup>69</sup>:

**Բասրահայ, մոսուլահայ** և այս կարգի այլ բառերի գործածության հարցում կարևոր դեր են խաղացել հայկական հանրագիտարանները: Հանրագիտարանային բառահոդվածի սահմանափակ տարածքը հաճախ հարկադրել է դիմել հասկացության արտահայտման հնարավորինս սեղմ տարբերակի: Այդպես բառակապակցության փոխարեն գործածվել են հողակապավոր բարդությունները:

## Հորդանանահայ

**Հորդանանահայ** բառը անցյալ դարի ծնունդ է (հմմտ. «Բազմաթիվ **հորդանանահայ** երիտասարդներ գալիս են Հայաստան բարձրագույն կրթություն ստանալու»<sup>70</sup>), թեև Հորդանանի տարածքում հայ համայնք գոյություն է ունեցել վաղ ժամանակներից ի վեր: Հայ համայնքը սովորացել է Մեծ եղեռնից հետո, երբ հազարավոր գաղթականներ ապաստան են գտել այստեղ: 1948-ին հայերը 6 հազար էին, այժմ՝ շուրջ 3 հազար: Հորդանանահայերն ունեն եկեղեցի, գործում են միություններ: Հայկական միակ

67 Այս բառն էլ թյուրըմբռնմամբ գրանցվել է իբրև նոր (տե՛ս «Նոր բառեր», Ա պրակ), թեպետ արևելահայերենում ևս տասնամյակների պատմություն ունի (հմմտ., օրինակ, «**Բաղդադահայ** համայնքը ղեկավարում է Առաջնորդարանը և Ազգային կենտրոնական վարչությունը» (տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 2, Եր., 1976, էջ 251):

68 «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 1, Եր., 1974, էջ 305:

69 «Հայ Սիլյուր» հանրագիտարան, էջ 270:

70 «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 6, Եր., 1980, էջ 589:



դպրոցը 2018 թ. փակվեց:

**Հորդանանահայ** բառը երկարժեք է. նախ ձևավորվել է ածականի արժեքը, ապա՝ գոյականի. հմնտ. «...բարձրագույն կրթություն ստացած են Հայաստան, ինչ որ մեծապես նպաստած է **յորդանանահայերու** շրջանի հայկական ինքնությունն ամրապնդման» («Գանձասար» (Հալեպ), 3.12.2017):

Արևմտահայերենում գործածվում է նաև **յորդանահայ** տարբերակը՝ երկրանվան օտար անունից: Օրինակ՝ «Լուսանկարչական Ցուցահանդես **յորդանահայ** լուսանկարիչ Միքո Գիզիրեանի» («Զարթոնք» (Պէյրուօ), 21.5.2016):

**Ամմանահայ:** Հորդանանի մայրաքաղաք Ամմանի անվան հիման վրա կազմվել է **ամմանահայ** բառը, որ սակավադեպ է: Օրինակ՝ «**Ամմանահայ** գաղութը կը խոստովանի և կը վկայէ...» (www.yerepouni-news.com/archives/24739):

**Իրպիտահայ:** Իրպիտ քաղաքի հայ համայնքն այնքան էլ հայտնի չէ, բայց «քաղաքանուն+հայ» կաղապարի հիման վրա կազմվել է **իրպիտահայ** բառը: Մի հրապարակման մեջ այն գործածվել է կաղապարին բնորոշ երկու արժեքներով. «Զեկոյցը բացայայտեց **իրպիտահայերուն** ձիգը՝ պահպանելու իրենց լեզուն, մշակոյթը, կրօնքը, խոհանոցը և պատմությունը» և «Զեկոյցը հիմնուած էր Իրպիտ ապրած երէց հայերու հետ հարցազրոյցներու .... և **իրպիտահայ** ընտանիքներու մօտ պահպանուած արխիւային մնացորդներու վրայ» (<http://ragmamoul.net/hy/diaspora-news/2016/05/27>): Սրանք գուցեև բնագրային եզակի վկայություններ են:

### Քուվեյթահայ

**Քուվեյթահայ**–ը նոր բառ է: Բառի կազմությունն առնչվում է անցյալ դարի երկրորդ կեսին, երբ արաբական այդ երկրում որոշակի կազմակերպված հայ համայնք կար: Հմնտ. «Մեկնում էին **քուվեյթահայ** երեխաները» («Հայրենիքի ձայն», 2.09.1987):

Քուվեյթում հայերը բնակություն են հաստատել 1950–ականներից, եկել են Սիրիայից, Լիբանանից, Իրանից, Իրաքից, Պաղեստինից և Հորդանանից: Ունեն եկեղեցի, ազգային վարժարան, թերթ, միություններ: Քուվեյթում այժմ շուրջ 5 հազար հայ է ապրում (մինչև 1991 թ. Ծոցի պատերազմը 10–12 հզ. են եղել):

Գործածվում է հատկապես մամուլում, երկու արժեքով. գոյական՝ «Պատերազմի պատճառով մեծ թվով **քուվեյթահայեր** որոշեցին սեփական տներ ունենալ Հայաստանում» («Առավոտ», 18.01.2018) և ածական՝ «**Քուվեյթահայ** գրողը բարձր է գնահատել Ա. Սարաֆի վեպը» («Հայաստանի Հանրապետություն», 27.10.2018):

### Կատարահայ

**Կատարահայ**–ը նոր բառ է, հազվադեպ, առաջին բաղադրիչը **Կատար** երկրանունն է<sup>71</sup>: Հայերը Կատար տեղափոխվել են Սիրիայից, Լիբանանից, մերձավորարևելյան այլ երկրներից, նաև Հայաստանից: Նրանց թիվը

71 Հմնտ. **Հարությունյան Լ., Փաշայան Ա.**, Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ, Եր., 2012, էջ 32: Երկրանվան տարբերակն է **Քաթար**, որից **հայ** բաղադրիչով բառ չի կազմվել:

հստակ չէ (500-ից մինչև 1000 և ավելի):

**Կատարահայ** բառը գործածվում է հիմնականում թվային տիրույթում, ածականի արժեքով, ինչպես՝ «Դեսպան Ղարիբջանյանը հանդիպում է ունեցել նաև **կատարահայ** համայնքի ներկայացուցիչների հետ» ([www.mfa.am](http://www.mfa.am)), «**Կատարահայ** գործարարները հետաքրքրված են Հայաստանում ներդրումներով» ([armenpress.am/arm/news/890844](http://armenpress.am/arm/news/890844)):

## Մարոկկահայ

**Մարոկկահայ**-ը խիստ հազվադեպ նոր կազմություն է, որի առաջին բաղադրիչը Մարոկկո երկրանունն է: Այս երկրում հայերը երբեք մեծաթիվ չեն եղել և ազգային կառույցներ չեն ունեցել, հայերի թիվը երբևէ հարյուրի չի հասել, սակավաթիվ հայեր այստեղ հաստատվել են Մեծ եղեռնից, որոշ ընտանիքներ՝ Երկրորդ աշխարհամարտից հետո: Անկախ այս ամենից՝ կազմվել է նրանց անվանող բառը:

Վկայված է միայն գոյականի արժեքով. «**Մարոկկահայերը** հյուրընկալել են Հայաստանից հյուրախաղերի եկած երգչախմբերի, պարային և այլ համույթների»<sup>72</sup>: Բառակազմության ժամանակ տեղանվան վերջին **n**-ն ընկնում է, նրա փոխարեն հանդես է գալիս **ա** հոդակապը (**n**-ով վերջացող բառերի դեպքում սա հայերենում օրինաչափ չէ):

## Եզրակացություններ

«Արաբական երկրներում ապրող հայ» իմաստն արտահայտող բառերից առաջինը կազմվել է **եգիպտահայ**-ը (XIX դ. երկրորդ կես), այն առաջինն է բառարանային գրանցում ստացել (1911 թ.) և ամենից շատ ընդգրկվել հայերենի բառարաններում:

**Եգիպտահայ**-ը նախասփյուռքյան շրջանի կազմություն է, երկրանուններից բաղադրված **պաղեստինահայ, սուդանահայ, սիրիահայ/սուրիահայ, լիբանանահայ, իրաքահայ, հորդանանահայ** բառերը՝ հետեղեռնյան՝ սփյուռքյան շրջանի են, մի քանի բառ կազմվել է արդի ժամանակներում, ինչպես՝ **կատարահայ, քուվեյթահայ, մարոկկահայ**:

«Արաբական երկրների հայ» իմաստն արտահայտող բառերն աղերսվում են «արևմտահայ» բառիմաստի հետ, քանի որ արաբական երկրների այժմյան հայ համայնքները ձևավորվել են հիմնականում Մեծ եղեռնից հետո, Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից եկած գաղթականներով:

Բառաիմաստային խմբի բառերը ստեղծվել են բառակազմական հետևյալ մասնակաղապարներով՝

ա) «երկրանուն+հայ» (**եգիպտահայ, իրաքահայ, լիբանանահայ, կատարահայ, հորդանանահայ, մարոկկահայ, պաղեստինահայ, սուդանահայ, սիրիահայ, քուվեյթահայ**), ընդամենը 10 բառ.

բ) «քաղաքանուն+հայ» (**աղեքսանդրիահայ, ամմանահայ, անտիոքահայ, բաղդադահայ, բասրահայ, բեյրութահայ, բերիահայ, դամասկ(ոս)ահայ, զահլեահայ, իրպիտահայ, լաթաքիահայ, կահիրեահայ, կամիշ-լիահայ, հալեպահայ, հոմսահայ, մոսուլահայ, սադիմահայ/երուսաղե-**

72 «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 391:

մահայ), ընդամենը 17 բառ.

գ) «գյուղանուն+հայ» (**քեսաբահայ**), «տարածաշրջանի անուն+հայ» (**սվեդիահայ**):

Ընդհանուր անուն է **արաբահայ**-ը, որը կազմվել է **արաբական երկիր, արաբական աշխարհ** լեզվական միավորներից:

Հայերենի միալեզվյան և թարգմանական տարբեր բառարաններում (բացատրական, ուղղագրական, հանգաբառարան, նոր բառերի) գրանցվել են՝

ա) «երկրանուն+հայ» մասնակաղապարով կազմվածներից՝ **եգիպտահայ, իրաբահայ, լիբանանահայ, հորդանանահայ, սիրիահայ,**

բ) «քաղաքանուն+հայ» մասնակաղապարով կազմվածներից՝ **բաղդահայ, բեյրութահայ, դամասկոսահայ, երուսաղեմահայ/սաղիմահայ:**

Բառախմաստային խմբի միավորների բառարանագրումը համակարգված բնույթ չի կրում, դրանք հատուկենտ արձանագրումներ են:

Բառախմբի մի շարք միավորներ նորակազմ են, հայերենի պոտենցիալ բառապաշարի միավորներ:

Որոշ բառեր հանդես են գալիս տարբերակայնությամբ (զուգաձևությամբ).

- արևելահայերեն/արևմտահայերեն՝ **բաղդադահայ-պաղտատահայ, բեյրութահայ - պեյրութահայ, կահիրեահայ - գահիրեահայ, սիրիահայ - սուրիահայ** և այլն,
- ավանդական և հայաստանյան ուղղագրությամբ՝ **յորդանանահայ - հորդանանահայ, հալեպահայ - հալեպահայ** և այլն,
- բառային-բառակազմական՝ **դամասկոսահայ - դամասկահայ, լիբանանահայ - լիբանահայ, յորդանանահայ - յորդանահայ:**

Բառախմբի միավորներից առավել հաճախադեպ են **եգիպտահայ, սիրիահայ, լիբանանահայ, հալեպահայ, բեյրութահայ** բառերը, մնացածները զգալապես պատկանում են հայերենի պասիվ բառապաշարին:

Կազմվել են «արաբական երկրների հայ» նշանակող մի շարք բառերի հավաքականները՝ **եգիպտահայություն, լիբանանահայություն, բեյրութահայություն, սիրիահայություն, հալեպահայություն, հորդանանահայություն, քեսաբահայություն** և այլն:

**Դավիթ Ս. Գյուրջինյան** – շուրջ 70 գիտական հոդվածների, դպրոցական և համալսարանական բազմաթիվ դասագրքերի, ձեռնարկների, բառարանների հեղինակ: Գիտական հետաքրքրություններն են հայոց լեզվի բառակազմությունը և բառակազմական իմաստաբանությունը, բառապաշարը, բառարանագրությունը և բառարանագիտությունը, հայ խոսքարվեստը:

## Summary

### **HISTORY OF MIGRATION AND SCATTERING:**

#### Lexico–Semantic Group “Armenians of Arab Countries” in the Armenian Language

Davit S. Gyurjinyan

**Key words** – migration, Diaspora, lexico–semantic group, Arab world, եգիպտահայ “Egyptian Armenian”, արաբահայ “Armenian from Arab countries”, սիրիահայ “Syrian Armenian”, լիբանանահայ “Lebanese Armenian”, բեյրութահայ “Armenian from Beirut”, իրաքահայ “Iraqi Armenian”, սփյուռքահայ “Diasporan Armenian”.

This article studies 30 lexical units of the “Armenian of Arab Countries”, which have been formed since the second half of the 19th century as a result of the almost uninterrupted migration from Armenia, as well as pogroms, massacres and genocides of the Armenians in Western Armenia.

Word-building submodels are revealed: “country name + հայ “Armenian”” (եգիպտահայ “Egyptian Armenian”, սիրիահայ “Syrian Armenian”), “city name + հայ” (բեյրութահայ “Armenian from Beirut”, հալեպահայ “Armenian from Aleppo”), “village name + հայ” (քեսաբահայ “Armenian from Kessab”) and “region name + հայ” (սվեդիահայ “Armenian from Suedia”), as well as արաբահայ “Armenian from an Arab country”. The time of formation of the studied words is determined, the meanings, frequency and spheres of the use of these words, as well as their derivational and spelling variations, and lexicographic history are analyzed.

## Резюме

### **ИСТОРИЯ МИГРАЦИИ И РАССЕЯНИЯ**

#### Лексико–семантическая группа «армянин из арабских стран» в армянском языке

Давид С. Гюрджинян

**Ключевые слова** – миграция, диаспора, лексико–семантическая группа, арабский мир, «армянин из Египта», «армянин из арабских стран», «армянин из Сирии», «армянин из Ливана», «армянин из Бейрута», «армянин из Ирака», «армянин из диаспоры».

В статье исследуются 30 лексических единиц лексико–семантической группы «армянин из арабских стран», которые образовались, начиная со второй половины XIX века, вследствие почти непрерывной миграции из Армении, а также погромов, резни и геноцида армян в Западной Армении.

Выявляются словообразовательные подмодели: «название страны+հայ «армянин» (եգիպտահայ «армянин из Египта», սիրիահայ «армянин из Сирии»), «название города+հայ» (բեյրութահայ «армянин из Бейрута», հալեպահայ «армянин из Алеппо»), «название деревни+հայ» (քեսաբահայ «армянин из Кесаба») и «название региона+հայ» (սվեդիահայ «армянин из Швеции»), а также արաբահայ «армянин из арабской страны». Определяется время образования исследуемых слов, анализируются значения, частотность и сферы употребления данных слов, их словообразовательные и орфографические варианты, лексикографическая история.

## REFERENCES

1. **Abrahamyan A. G.**, Hamar'ot urvagic' hay gagh't'avayreri patmut'yan, Ye'r, "Hay-pethrat", 1964 (in Armenian).
2. **Ac'aryan Hr.**, Hay gagh't'akanut'yan patmut'yun, Ye'r, 2002 (in Armenian).
3. **Alpoyac'e'an A.**, Patmut'ivn hay gagh't'akanut'e'an. Hayeru crumə ash'xarhi zanazan maserə, Տ. А. С, Cahire, 1941, 1961 (in Armenian).
4. **Alpoyac'e'an A.**, Arabakan Miaceal Hanrapetut'yan Ye'giptosi nahangə yev' hayerə (skizben minch'ev mer orerə), Cahire, 1960 (in Armenian).
5. **At'ayan E. R.**, Lezvakan ash'xarhi nerqin kerpavorumə yev' artaqin veraberut'yunə, Ye'r., Ye'revani hamalsarani hratarakut'yun, 1981 (in Armenian).
6. **Avetiqean G., Syurmelean X., Avgerean M.**, Nor bar'girq, haykazean lezui, h. 1-2, Venetik, 1836-1837 (in Armenian).
7. **Bagh'ramyan R. H., Xalilov I. H.**, Hay-adrbejaneren bar'aran, "Luys", Ye'r., 1978 (in Armenian).
8. **Bar'aran Surb Groc**, Constantinople, 1881 (in Armenian).
9. **Baratyan N. R.**, Hayeren-angleren bar'aran, Ye'r., "Macmillan-Armenia", 2002 (in Armenian).
10. **Barsegh'yan H.**, Hayeren ugh'gh'agrakan-ugh'gh'axosakan terminabanakan bar'aran, Ye'r., "Luys", 1973 (in Armenian).
11. **Bayburdyan V.**, Hay gagh't'akanut'yan patmut'yun, h. 2, Ye'r, 2003 (in Armenian).
12. **Dagh'bash'yan Y.**, Liakatar bar'aran hayerenic ruseren, T'iflis, 1911 (in Armenian).
13. **Eloyan S.**, Ardi hayereni norabanut'yunneri bar'aran, Ye'r., "Nairi", 2002 (in Armenian).
14. **Galstyan A.** yev' urish'ner, Nor bar'er, h. 1, Ye'r., "HH GAA "Gitut'yun", 2015 (in Armenian).
15. **Galstyan A.** yev' urish'ner, Nor bar'er, h. 4, Ye'r., "Asogh'ik", 2018 (in Armenian).
16. **Gnel arq. C'erec'e'an, Tonikean P. K., Ter Xach'aturean A.**, Hayoc lezui nor bar'aran, h. 1, Beirut', "K. Tonikian yev' vordiq", 1992 (in Armenian).
17. **Gh'aragyulyan T. A.**, Dipvac'ayin yev' potenc'ial bar'erə zh'amanakakic hayereni bar'astegh'c'man hamakargum "Lezvi yev' voc'i harcer", h. 7, Ye'r., "Haykakan SSH GA hratarakch'ut'yun", 1983 (in Armenian).
18. **Gh'azaryan B. K.**, Zh'amanakakic hayoc lezvi hac'axakanut'yan bar'aran, Ye'r., "Haykakan SSH GA hratarakch'ut'yun", 1982 (in Armenian).
19. **Guyumc'e'an M.**, Əndardz'ak bar'aran hayerene angleren, Cairo, 1950 (in Armenian).
20. **Gyurjinyan D.**, Anun xosqi maseri t'vi kargə ardi hayerenum: qerakanakan bar'arantegh'ekatu, Ye'r., "Limush", 2005 (in Armenian).
21. **Gyurjinyan D.**, "Arterkri hay" imastayin xmbi bareri bar'aranagrakan verluc'ut'yunə

- “Ejmiac’in”, 2017, 10 **(in Armenian)**.
22. **Gyurjinyan D.**, “Arterkri hay” imastayin xmbi bar’eri nerkayate’umə hayeren t’argmanakan bar’arannerum, “Banber Ye’revani hamalsarani: Hayagitut’yun”, 2017, 2 **(in Armenian)**.
  23. **Gyurjinyan D.**, “Arterkri hay” imastayin xmbi bar’aranayin granc’um ch’unecogh’ bar’ayin miavorneri qnnut’yun”, “Ejmiac’in”, 2018, t’. 1 **(in Armenian)**.
  24. **Gyurjinyan D.**, “Hay havaqakanut’yun nsh’anakogh’ bar’ayin miavornerə”, “Vem”, 2018, t’. 2 **(in Armenian)**.
  25. **Gyurjinyan D.**, ”Parskastanum aprogh’ hay” nsh’anakogh’ bar’erə. Imastakarucvac’qayin yev’ bar’aranagrakan qnnut’yun, “Vem”, 2018, t’. 1 **(in Armenian)**.
  26. **Harut’yunyan L., P’ash’ayan A.**, C’oci arabakan erkrneri hay hamaynqnerə. ardi himnaxndirner, Ye’r., «Lusakn», 2012 **(in Armenian)**.
  27. **Hay gagh’t’ash’xarhi patmut’yun** (mijnadaric minch’ev 1920 t’.), h. 2, Ye’r., “HH GAA Patmut’yan institut”, 2003 **(in Armenian)**.
  28. **“Haykakan sovetakan hanragitaran“**, h. 1-12, Ye’r., “Haykakan hanragitarani glxavor xmbagrut’yun”, 1974-1987 **(in Armenian)**.
  29. **Hay-ruseren bar’aran**, Ye’r., “Haykakan SSH GA hratarakch’ut’yun”, 1984 **(in Armenian)**.
  30. **“Hay spyurq”** hanragitaran, Ye’r., “Haykakan hanragitaran: hratarakch’ut’yun”, 2003 **(in Armenian)**.
  31. **Jahukyan G. B.**, Zh’amanakacic hayoc lezvi imastabanut’yun yev’ bar’akazmut’yun, Ye’r., “Haykakan KhSH GA hratarakch’ut’yun”, 1989 **(in Armenian)**.
  32. **Malxaseanc St.**, Hayeren bacatrakan bar’aran, h. 1-4, Ye’r., “Haykakan SSR petakan hratarakch’ut’yun”, 1944-1945 **(in Armenian)**.
  33. **Minasean M.**, Hayeren avandakan ugh’gh’agrut’yan bar’aran, Geneva, 2000 **(in Armenian)**.
  34. **Nazaryan R., Gyodakyan A.**, Hayeren ugh’gh’agrakan dprocakan bar’aran, Ye’r., “Zangak-97”, 2004 **(in Armenian)**.
  35. **P’ash’ayan A., Harut’yunyan L.**, Siriayi hay hamaynqə. Ardi himnaxndirner, Ye’r., «Lusakn», 2011 **(in Armenian)**.
  36. **Petrosyan H. Z., Galstyan S. A., Gh’aragyulyan T’. A.**, Lezvanakan bar’aran, Ye’r., “Haykakan SSH GA hratarakch’ut’yun”, 1975 **(in Armenian)**.
  37. **Pogh’osyan P., Mxitaryan S.** yev’ urish’ner „Hayoc lezvi hangabar’aran, Ye’r., “Haykakan SSH gitut’yunneri akademiayi hratarakch’ut’yun”, 1976 **(in Armenian)**.
  38. **Suqiasyan A. M.**, Hayoc lezvi homanish’neri bar’aran, Ye’r., “Haykakan SSH gitut’yunneri akademiayi hratarakch’ut’yun”, 1967 **(in Armenian)**.
  39. **T’eqecan Y.**, Bar’aran hayerene spaneren, Buenos Ayres, “Akian”, 1984 **(in Armenian)**.
  40. **T’op’uzyan H. X.**, Yegiptosi haykakan gagh’ut’i patmut’yun (1805-1952), Ye’r., “Haykakan SSH GA hratarakch’ut’yun”, 1978 **(in Armenian)**.
  41. **Zeqiean L.**, Inqnut’ean xc”ankar, Peyrut, 2001 **(in Armenian)**
  42. Zh’amanakacic hayoc lezvi bacatrakan bar’aran, h. 1-4, Ye’r., 1969-1980, “Haykakan SSH gitut’yunneri akademiayi hratarakch’ut’yun” **(in Armenian)**.